ՊԱՅՄԱՆԱԳԻՐ 605-21

ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք.Երևան «17» «12» 2021թ.

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Խառատյանի, ով գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Մեղրու բնակարանային կոմունալ տնտեսություն» ԲԲ ընկերությունը (այսուհետ՝ Շահառու), ի դեմս ընկերության տնօրեն Վարդան Հայրապետյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետ երկուսը միասին Կողմեր, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի «Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Սյունիքի մարզում ժամանակավորապես տեղավորված Արցախի Հանրապետության քաղաքացիներին կացարան տրամադրած տնտեսավարողներին աջակցություն տրամադրելու մասին» N 1139-L որոշումը և ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 12-ի N 1320-Ն (այսուհետ՝ Որոշում) որոշումը՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Շահառուին հատկացնել Որոշմամբ նախատեսված 1230 □Ռազմական դրության պայմաններում քաղաքացիների կյանքի ու անվտանգության ապահովման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման ծրագիր□ ծրագրի 12003. «Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Սյունիքի մարզում ժամանակավորապես տեղավորված Արցախի Հանրապետության քաղաքացիներին կացարան տրամադրած տնտեսավարողներին պետական աջակցություն» միջոցառմամբ նախատեսված, Պայմանագրի 2-րդ կետով հաշվարկված աջակցությունը:

1.2. Պայմանագրով օգտագործվող հասկացություններն ունեն ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի N 1139-L որոշումով նախատեսված իմաստը:

2. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

2.1 Օժանդակության ձևը՝ միանվագ աջակցություն (ֆինանսական միջոցների տրամադրում) պայմանագրի կնքման միջոցով, հետևյալ հաշվարկով՝

ԱՉ = ՀՔ*ՕՔ*ՄԱ*0.4-ԿՓ-Օ

Սույն կետի կիրառության նպատակով՝

1) ԱՉ-ն պետության կողմից տրամադրվող աջակցության չափն է, որը կազմում է 1 073 450.0 ՀՀ դրամ.

2) ՀՔ-ն շահառուի կողմից հյուրընկալված՝ Արցախի Հանրապետության քաղաքացիների թվաքանակը, որը սահմանված է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 23-ի N 1822-Ն և 2020 թվականի դեկտեմբերի 8-ի N 1987-Ն որոշումների շրջանակներում օժանդակություն ստացած շահառուների ցանկերը, որը կազմում է 9 քաղաքացի.

3) ՕՔ-ն աջակցության ամսվա (2020 թվականի հոկտեմբեր) օրերի քանակն է.

4) ՄԱ-ն հոկտեմբեր ամսին շահառուների կողմից հյուրանոցային ծառայությունների մեկ օրվա միջինացված արժեքն է (10 000 ՀՀ դրամ).

5) ԿՓ-ն ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 23-ի N 1822-Ն և 2020 թվականի դեկտեմբերի 8-ի N 1987-Ն որոշումների շրջանակներում շահառուների ստացած օժանդակության չափն է, որը կազմում է 42 550.0 ՀՀ դրամ.

6) Օ-ն ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 4-ի N 310-L որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում ստացած օժանդակության չափն է, որը կազմում է 0 դրամ:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

3.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 25-ը:

4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Պայմանագրի պահանջների խախտման համար Կողմերը կրում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Կողմերի միջև Պայմանագրի հիման վրա ծագող այն բոլոր հարաբերությունները, որոնք կարգավորված չեն Պայմանագրով, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Պայմանագրի առնչությամբ ծագած վիճելի հարցերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2 Սույն Պայմանագիրը կնքված է երկու օրինակից, հայերեն լեզվով, 2 էջից, յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

5.3 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

5.4 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախարարություն	**Շահառու**
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	«Մեղրու բնակարանային կոմունալ տնտեսություն» ԲԲԸ
Հասցե՝	Հասցե՝
0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5	Ք. Մեղրի, Զորավար Անդրանիկի 41
Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն	Հ/Հ 16099100080500
Հ/Հ 900011038255	ՀՎՀՀ 09700734
ՀՎՀՀ 02698604	
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	
ԱՐՄԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ	ՎԱՐԴԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
----------	----------
Կ.Տ.	Կ.Տ.